**Արձանագրություն N 4**
ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցում գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11 հունիսի 2018թ
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Սարգիս Ստեփանյան

անդամներ՝ Աշոտ Քթոյան, Ոսկի Ֆռանգուլյան,

քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

**1. N ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1 գնման պայմանագրի նախագծի վերաբերյալ ստացված առաջարկի մասին**
(Սարգիս Ստեփանյան)

1.1 <<Ակադա Պրինտ>> ՍՊԸ-ի կողմից N ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1 գնման պայմանագրի նախագծի վերաբերյալ 08.06.2018թ /աշխատանքային օրվա ավարտին/ առաջարկ է ստացվել պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետը՝ <<պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 20 օրացուցային օրվա ընթացքում>> վերաձևակեպել <<ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում>>:

1.2 Հանձնաժողովի կողմից քննարկման արդյունքում արձանագրվել է, որ համաձայն N ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1 գնման պայմանագրի նախագծի 7.1 կետի երկրորդ պարբերության՝ <<Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը>>, այսինքն պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված աշխատանքների կատարման ժամկետի սկիզբը՝ <<Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում>> միանշանակ հաշվարկվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պայմանագիրը սահմանված կարգով հաշվառվելու օրվանից սկսած, ուստի <<Ակադա Պրինտ>> ՍՊԸ-ի առաջարկության անհրաժեշտությունը չկար, քանի որ պայմանագրի նախագծով արդեն իսկ կարգավորված էր վերջինիս կողմից բարձրացված խնդիրը:
***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

1.3 Քարտուղարին՝ սահմանված կարգով <<Ակադա Պրինտ>> ՍՊԸ-ին տեղեկացնել 1.2-րդ կետով արձանագրված քննարկման արդյուքների մասին:
***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

1.4 Արձանագրել, որ մինչ օրս <<Ակադա Պրինտ>> ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել իր կողմից ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, այն դեպքում երբ պայմանագրի նախագիծն ու պայմանագիր կնքելու մասին ծանուցումը վերջինիս տրամադրվել է 24.05.2018թ: Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը՝ <<Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից>> և, հաշվի առնելով, որ լրացել է <<Ակադա Պրինտ>> ՍՊԸ-ի կողմից ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի կատարման ապահովումը ներկայացնելու համար սահմանված ժամկետը՝ <<Ակադա Պրինտ>> ՍՊԸ-ն զրկվում է նշված պայմանագիրը ստորագրելու իրավունքից:
***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

1.5 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետը՝ <<Ակադա Պրինտ>> ՍՊԸ-ի տվյալները, ներառյալ համապատասխան հիմքերը, ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, հաշվի առնելով, որ առկա են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա/ և բ/ մասերով նախատեսված հիմքերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**2. N ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-18/1 գնման գործընթացը շարունակելու մասին**

(Սարգիս Ստեփանյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 49-րդ կետը և նույն կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, հրավիրել <<Էյ Էմ Փի Ջի Գրուպ>> ՍՊԸ-ին հայտով ներկայացված գնի նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որպես երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից, որի գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

2.2 Հանձնաժողովի հաջորդ՝ բանակցությունների նիստը կազմակերպել ս.թ. հունիսի 14-ին ժամը 10:00-ին ՀՀ արդարադատության նախարարություն, Վ. Սարգսյան 3/8, 3-րդ հարկ, 306 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ս. Ստեփանյան

անդամներ՝ _____ Ռ. Ֆռանգուլյան

_____ Ա. Քթոյան

քարտուղար՝ _____ Ս. Պետրոսյան